OSCE

Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն

ԵԱՀԿ երևանյան գրասենյակ

ք. Երևան, 2006թ. փետրվար

Գրասենյակի գործունեության 2005թ. ամփոփ նկարագիր

Առաջնորդվելով ԵԱՀԿ մշտական խորհրդի կողմից տրամադրված մանդատով՝ ԵԱՀԿ երևանյան գրասենյակը 2004թ. ընթացքում շարունակեց ԵԱՀԿ սկզբունքների տարածումն ու հանձնառությունների կատարումը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության հետ համագործակցությունը ԵԱՀԿ բոլոր ուղղություններով, այդ թվում՝ անվտանգության և կայունության մարդու իրավունքների, քաղաքական, տնտեսական և բնապահպանական ոլորտներում:

ԵԱՀԿ գրասենյակը ներգրավված է եղել մի շարք նախաձեռնություններում՝ աջակցելով ՀՀ իշխանություններին բարեփոխելու մի շարք ոլորտներին (ընտրություններ, հանրահավաքներ անցկացնելու ազատություն, կրոնի ազատություն և պայքար մարդկանց առևտրի (թրաֆիկինգի) դեմ) առնչվող օրենսդրությունը: Գրասենյակի կողմից նաև իրականացվել է երկու խոշոր ծրագիր՝ շրջակա միջավայրի համար վտանգավոր հրթիռային վառելիքի բաղադրիչի՝ մելանժի վերացում և աջակցություն ոստիկանության աշխատակիցների ուսուցման և ոստիկանության ու բնակչության միջև փոխգործակցության հաստատման աշխատանքներում:

Երևան քաղաքի սահմաններից դուրս գտնվող բնակավայրերի կարևորությունը հաշվի առնելով՝ գրասենյակը հիմնել է երկու բնապահպանական տեղեկատվական կենտրոններ Սյունիքի մարզում և մի շարք մարզերում կազմակերպել է կլոր սեղաններ-քննարկումներ տնտեսական, բնապահպանական, մարդու իրավունքների և ժողովրդավարության թեմաներով: Գործունեության մյուս ոլորտներից են մարդու իրավունքների պաշտպանությունը, մամուլի ազատությունը, փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացումը, աշխատանքային միգրացիան և կոռուպցիայի, մարդկանց առևտրի (թրաֆիկինգի) և փողերի լվացման դեմ տարվող պայքարը:

Իր հնգամյակը տոնելիս՝ գրասենյակը հանդիսավոր արարողությունների միջոցով խթանել է ԵԱՀԿ հանձնառություններն ու սկզբունքները և աշխատանքները դարձրել ավելի ընդգրկուն:

<u>Ռազմաքաղաքական ոլորտ</u>

Ոստիկանության աջակցման ծրագիր. Ոստիկանության աջակցման ծրագիրը, որ կազմում է ռազմաքաղաքական ոլորտում գրասենյակի կողմից իրականացվող աշխատանքների զգալի մասը՝ ուղղված է ոստիկանության և բնակչության միջև վստահության ձևավորմանը, հասարակության և ոստիկանության միջև փոխգործակցության ժամանակակից մոդելի մշակման աշխատանքների օժանդակմանը: Ծրագիրն աջակցում է ոստիկանության ուսումնական կենտրոնի հզորացմանը, Արաբկիրի շրջանի ոստիկանության և բնակչության միջև փոխգործակցության մոդելի մշակմանը և ներմուծմանը և Երևան քաղաքի ոստիկանության վարչությունում ժամանակակից ենթակայական շղթայի և

հսկողության համակարգի ներդրմանը: 2005թ. մարտի 15-ին ոստիկանության և ԵԱՀԿ գրասենյակի միջև կնքվել է պայմանագիր՝ սկիզբ դնելով ուսուցման կենտրոնի վերանորոգման աշխատանքներին:

Կիբերանվտանգության բարձրացման և կիբերհանցագործության դեմ պայքարի աշխատանքային խումբ. Գրասենյակը առանցքային դեր է խաղացել համապատասխան ազգային աշխատանքային խմբի ստեղծման գործում, որի անդամները հանդիսանում են ՀՀ պաշտպանության նախարարության, Ազգային անվտանգության, ոստիկանության, Կենտրոնական բանկի և Ազգային Ժողովի, ինչպես նաև ՀՀ Նախագահի աշխատակազմի ներկայացուցիչներ: Աշխատանքային խումբը մշակել է գործունեության ազգային ծրագրի նախագիծ, որով առաջարկվում է ամրապնդել կիբերանվտանգության օրենսդրական և տեխնիկական ասպեկտները, ինչպես նաև կառավարությանը աջակցել կիբերհանցագործության դեմ պայքարի գործում:

<u>Տնտեսական և բնապահպանական ոլորտ</u>

Հայաստանի Հանրապետությունում հրթիռային վառելիքի բաղադրիչի (մելանժ) պաշարների վերացում (հանդիսանում է միջոլորտային՝ տնտեսական և բնապահպանական ու ռազմաքաղաքական համատեղ նախաձեռնություն). Ընդառաջ գնալով ՀՀ կառավարության խնդրանքին՝ գրասենյակը տեխնիկական և ֆինանսական աջակցություն է տրամադրում 872 տոննա հրթիռային վառելիքի բաղադրիչի (մելանժ) վնասազերծման համար: Հիմնվելով միջազգային փորձագիտական խմբի կողմից կատարված անկախ ուսումնասիրության արդյունքների և առաջարկությունների վրա՝ 2005թ. օգոստոսին հաստատվել է ծրագրի տեխնիկական նախագիծը, գնահատվել է շրջակա միջավայրի վրա ազդեցությունը և վերջնական տեսքի է բերվել բյուջեն: 2005թ. սեպտեմբերի 30-ին ՀՀ պաշտպանության նախարարության հետ փոխըմբռնման հուշագրի ստորագրումից հետո սկսվեց ծրագրի իրականացման վերջնական և կարևորագույն փուլը՝ էկոլոգիապես մաքուր ճանապարհով մելանժը հանքային պարարտանյութի վերածելու գործընթացը, որն օգտագործվելու է ցածր թթվայնություն ունեցող հողատարածքները պարարտացնելու նպատակով: Գրասենյակը բարձր է գնահատում ՀՀ պաշտպանության և բնապահպանության նախարարությունների հետ արդյունավետ համագործակցությունը, քանի որ այս նախաձեռնության հաջողության նախապայման են հանդիսանում հենց այդ հարաբերությունները:

ԵԱՀԿ տարածաշրջանում դեռևս պահպանված հրթիռային վառելիքի բաղադրիչի (մելանժ) մնացորդների վնասազերծման նպատակը համապատասխան երկրներում և տարածաշրջաններում բնակչության համար էկոլոգիական և անվտանգության պայմանների բարելավումն է: Նախաձեռնության իրականացումը հնարավոր է դարձել Ֆինլանդիայի, Գերմանիայի, ԱՄՆ-ի և Կանադայի կառավարությունների արագ արձագանքի և զգալի ֆինանսական աջակցության շնորհիվ:

Օրհուսի կենտրոնների ցանց. Գրասենյակը շարունակում է խթանել Օրհուսի կոնվենցիայի սկզբունքները՝ աջակցելով Երևանի «Բնապահպանության հանրային տեղեկատվական կենտրոնին» (հայտնի է որպես Օրհուսի կենտրոն) և մարզերում Օրհուսի նոր կենտրոններ բացելով: ԵԱՀԿ գրասենյակի, ՀՀ բնապահպանության նախարարության և մարզպետարանների միջև կնքված փոխըմբռնման եռակողմ հուշագրի հիման վրա Սյունիքի մարզում բացվել են Օրհուսի երկու մարզային կենտրոններ, իսկ մյուս երկուսը կբացվեն 2006թ. Տավուշի և Լոռու մարզերում: Դրանք ուղղված են հասարակական կազմակերպությունների, գործարար համայնքի և

պետական մարմինների միջև երկխոսության խթանմանը, շրջակա միջավայրին առնչվող խնդիրների վերաբերյալ հասարակության իրազեկման աստիճանի բարձրացմանը և շրջակա միջավայրին առնչվող որոշումների կայացման գործընթացին հասարակության մասնակցության խթանմանը:

«Շիկահող» արգելոցը. Գրասենյակի և շրջակա միջավայրի պաշտպանության հասարակական կազմակերպությունների դաշինքի միահամուռ ջանքերի շնորհիվ հնարավոր դարձավ փոխել «Շիկահող» արգելոցի միջով անցնելիք Հայաստան-Իրան նոր մայրուղի կառուցելու կառավարության որոշումը, որի հետևանքով վնաս կհասցվեր տեղի բնությանը:

Բնապահպանական թեմաներով գրող լրագրողների մրցույթ. Արդեն երեք տարի է, ինչ գրասենյակը և Օրհուսի կենտրոնը ազգային մրցույթ են հայտարարում բնապահպանական թեմաներով գրող լրագրողների միջև. այս տարվա թեման է «Շրջակա միջավայրը և արդյունաբերությունը»: Այս ծրագիրը նպատակաուղղված է խրախուսելու հեռուստալրագրողներին և թղթակիցներին՝ տեղեկացնելու բնապահապանական խնդիրների վերաբերյալ և հանրությանը ապահովելու ստույգ և մասնագիտական տեղեկատվությամբ: Փորձագետներից կազմված ժյուրիի կողմից որպես հաղթող ճանաչված հեռուստալրագրողներին և թղթակիցներին հատուկ արարողության ժամանակ հանձնվեցին մրցանակներ: 2005թ. մրցույթի ժամանակ հիմնականում ուշադրություն էր դարձվել նախկինում արդյունաբերությամբ աղտոտված տարածքների էկոլոգիապես մաքուր ճանապարհով վերականգնմանը, չվերահսկվող արդյունաբերական աղտոտմանը և գործող ձեռնարկություններում մաքրող սարքերի բացակայությանը:

«Շրջակա միջավայր և անվտանգություն» նախաձեռնություն. Աջակցելով «Շրջակա միջավայր և անվտանգություն» ծրագրին՝ գրասենյակը կազմակերպել է սեմինար-քննարկումներ Երևանի էկոլոգիական կարգավիճակի և կոշտ թափոնների կառավարման վերաբերյալ: Սյունիքի մարզի Քաջարանի քաղաքապետարանի խնդրանքով գրասենյակի աջակցությամբ հետազոտություն անցկացվեց՝ գնահատելու Քաջարանի հանքարդյունաբերության ազդեցությունը շրջակա միջավայրի վրա:

Որպես «Շրջակա միջավայր և անվտանգություն» նախաձեռնության մի մաս գրասենյակն աջակցում է հարավկովկասյան գետերի մոնիտորինգի ծրագրի ազգային բաղադրիչի իրականացմանը, որն արդեն չորրորդ տարին է, որ զբաղվում է տարածաշրջանում ջրի մոնիտորինգի համակարգի վերականգնմամբ, տեխնիկական հզորությունների բարձրացմամբ և ուսումնասիրության արդյունքները ինտերնետի միջոցով մատչելի դարձնելով:

Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքար. ՀՀ կենտրոնական բանկի նախագահի և գլխավոր դատախազի խնդրանքով ԵԱՀԿ գրասենյակը շարունակել է ահաբեկչության դեմ պայքարի հիմնական բաղադրիչներից մեկի՝ փողերի լվացման դեմ պայքարի ուղղությամբ ցուցաբերվող աջակցությունը: Գրասենյակն աջակցել է օրենսդրական դաշտի ձևավորմանը և ֆինանսական դիտարկումների կենտրոնի ստեղծմանը: ԵԱՀԿ գրասենյակի, ԵԱՀԿ տնտեսական և բնապահպանական հարցերի համակարգողի գրասենյակի և ՄԱԿ-ի թմրամիջոցների և հանցագործությունների կանխման գրասենյակի հետ համատեղ 2005թ. մայիսին կազմակերպված միջազգային համաժողովի ժամանակ քննարկվեց օտարերկրյա ֆինանսական հետախուզական կառույցների փորձը և միջազգային կազմակերպությունների դերը այդ գործընթացում: Գրասենյակը աջակցում է Ֆինանսական հետախուզական կառույցների Egmont խմբին միանալու Հայաստանի նախաձեռնությունը՝ կազմակերպելով վերապատրաստման ծրագրեր տարբեր

թիրախային խմբերի համար՝ ոչ միայն բանկային համակարգից, այլ նաև ոչ ֆինանսական կազմակերպություններից:

Սյունիքի մարզի տնտեսական զարգացում. ուղեցույց զբոսաշրջիկների համար. ԵԱՀԿ գրասենյակի աջակցությամբ «Զարգացման ծրագրեր» խորհրդատվական ընկերության կողմից մշակվել և տպագրվել է Սյունիքի մարզի ուղեցույց: Այն նախատեսված է ոչ միայն զբոսաշրջիկների, այլ նաև Սյունիքի մարզում գործարարությամբ զբաղվել ցանկացող մարդկանց համար: Ուղեցույցը մշակվել է 2004թ. ԵԱՀԿ գրասենյակի աջակցությամբ Սյունիքի մարզում անցկացված սոցիալ-տնտեսական զարգացման հեռանկարների ուսումնասիրության առաջարկությունների արդյունքում:

Աջակցություն փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացմանը. ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության, ՓՄՁ զարգացման ազգային կենտրոնի և Գերմանիայի տեխնիկական համագործակցության գործակալության ՊրոՍմե ծրագրի հետ սերտորեն համագործակցելով ԵԱՀԿ գրասենյակը աջակցել է մի շարք կլոր սեղանների կազմակերպմանը, որոնց հիմնական թեման է եղել 2006թ. ՓՄՁ զարգացման պետական ծրագրի համար առաջարկություններ տրամադրելու նպատակով փոքր և միջին ձեռնարկատիրությունը կարգավորող օրենսդրական դաշտի վերանայումը: Տեղական խորհրդատվական, միջազգային կազմակերպությունները և մասնավոր բիզնեսի օղակը ներկայացնող փորձագետները վերլուծում էին տնտեսական ոլորտում գոյություն ունեցող վարչարարական պարզեցման լավագույն միջազգային փորձը և քննարկում էին բարեփոխումների անհրաժեշտությունը՝ հատկապես սկսնակ ձեռներեցների, հարկային և մաքսային ընթացակարգերի հետ կապված:

Գրասենյակը Գորիսում և Գյումրիում երկու փորձնական բիզնես ինկուբատորների ստեղծման միջոցով անցկացրել է կենսունակության ուսումնասիրություն: Ուսումնասիրության նախնական արդյունքները ներկայացվել են ԵԱՀԿ գրասենյակի աջակցությամբ 2005թ. նոյեմբերի 4-ին կազմակերպված «Բիզնես ինկուբատորներ և ՓՄՁ զարգացում» թեմայով միջազգային համաժողովի ժամանակ: Համաժողովի և դրան հաջորդող սեմինար-քննարկումների նպատակը մարզերում կայուն շուկայական տնտեսության անցնելու գործընթացի ժամանակ սոցիալ-տնտեսական զարգացումը խթանող գործիք հանդիսացող բիզնես ինկուբատորների ստեղծման լավագույն փորձի փոխանակումն էր: Տեղական և օտարերկրյա զեկուցողների կողմից մասնավորապես քննարկվեցին ազգային քաղաքականությունը և ձեռներեցությունը խթանող և փոքր ու միջին ընկերությունների հիմնմանը նպաստող ինստիտուցիոնալ ենթակառուցվածքների անհրաժեշտությունը:

Գործարար և ներդրումային միջավայրի բարելավում. Նոյեմբերի 22-ին ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության հետ համատեղ ԵԱՀԿ գրասենյակը հանքարդյունաբերությանը նվիրված Լոնդոնի միջազգային կոնգրեսի շրջանակում կազմակերպեց Հայաստանի հանքարդյունաբերական օղակում ներդրումային հնարավորություններին նվիրված սեմինար: Սեմինարին և գործարարական հնարավորություններին նվիրված ցուցահանդեսին մասնակցում էին առաջատար հանքարդյունաբերական և ճարտարագիտական կազմակերպությունների, ներդրումային խմբերի և ֆինանսական հաստատությունների ավելի քան 150 ներկայացուցիչներ: Հայաստանի զեկույցում քննարկվում էին ներքին և արտաքին ներդրողների համար բարենպաստ պայմաններ ստեղծելու եղանակները, վայրընթաց արդյունահանման զարգացումը, ինչպես նաև շրջակա միջավայրի համար անվտանգ հանքահանման և հանքամշակման աշխատանքները:

Գրասենյակն աջակցել է «Զարգացած երկրներում վարչական պարզեցումներից քաղած դասերը. դրանց հավանական ազդեցությունը Հայաստանի վրա» փաստաթղթի մշակման աշխատանքներին, որը գնահատում է վարչական կանոնակարգերի պարզեցման լավագույն փորձը և քաղաքականություն մշակողներին ու գործարար համայնքին ներկայացնում Հայաստանում գործարար ու ներդրումային միջավայրը բարելավելու հնարավորություններն ու խոստումնալից միտումները:

Առևտրի խթանում. Եվրասիա հիմնադրամի Հարավային Կովկասի համագործակցության ծրագրի և Թրանսպերենսի ինթերնեշնլ ոչ կառավարական կազմակերպության համագործակցությամբ գրասենյակը դեկտեմբերի 1-ին կազմակերպեց սեմինար-քննարկում՝ ամփոփելու «Առևտրի խթանումը Հարավային Կովկասում» համատեղ իրականացվող բազմամյա ծրագրի արդյունքները: Այս ծրագիրն ուղղված է խթանելու ապրանքների և ծառայությունների առևտուրը և նվազեցնելու խանգարող վարչական խոչընդոտները՝ Հարավային Կովկասի համապատասխան ազգային շահագրգիռ կողմերի միջև երկխոսության և միջգերատեսչական համագործակցության միջոցով:

Ծրագրի շրջանակներում գնահատվել է Հարավային Կովկասի օրենսդրությունը և առկա փորձը, հինգ լեզուներով տպագրվել են տեղեկատվական գրքույկներ և մասնավոր ընկերությունների ու ֆիզիկական անձանց համար իրականացվել է ներմուծման և արտահանման ընթացակարգերի հետ կապված անվճար առցանց (online) խորհրդատվություն: Ծրագիրը սերտորեն կապված է 2006թ. տեղի ունենալիք «Տրանսպորտը ԵԱՀԿ տարածքում. անվտանգ տրանսպորտային ցանցեր և տրանսպորտի զարգացումը ի նպաստ տարածաշրջանային տնտեսական համագործակցության ամրապնդման և կայունության» թեմայով ԵԱՀԿ 14-րդ տնտեսական ֆորումի հետ:

<u>Մարդու իրավունքների ոլորտ</u>

Աջակցություն մարդու իրավունքների պաշտպանին (օմբուդսմեն). Գրասենյակը խթանում և աջակցում է Օմբուդսմենի ինստիտուտին, հետևում է այդ ոլորտում տեղի ունեցող օրենսդրական զարգացումներին և շարունակում է նախագահել օմբուդսմենի հարցերով զբաղվող միջազգային աշխատանքային խումբը, որի հանդիպումներին հրավիրվում է օմբուդսմենը, մասնակցում են ԵԱՀԿ անդամ-պետությունների դեսպանությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ:

2005թ. մայիս և հունիս ամիսներին ՀՀ օմբուդսմենի ինստիտուտի չորս ներկայացուցիչներ մասնակցեցին Լեհաստանի և Լիտվայի Սեյմասի (Խորհրդարան) օմբուդսմենի գրասենյակների գործընկերների կողմից մատուցված 2-շաբաթյա վերապատրաստմանը: 2005թ. հոկտեմբերին Լիտվայի Սեյմասի օմբուդսմենի գրասենյակի 2 փորձագետներ պատասխան այցով եղան Հայաստանում:

Գրասենյակը կշարունակի իր սերտ համագործակցությունը այս կառույցի հետ և կհետևի նոր օմբուդսմենի թեկնածության առաջադրման ու նշանակման ընթացքին:

Աջակցություն դատախազությանը. Մարդու իրավունքների միջազգային նորմերին և արդար դատավարության չափանիշներին դատախազների և քննիչների աշխատանքը ավելի համապատասխանեցնելու նպատակով՝ 2004թ. նոյեմբերին ԵԱՀԿ գրասենյակը և ԺՀՄԻԳ-ը նախաձեռնեցին ՀՀ դատախազության աջակցման ծրագիր: Ծրագրի շրջանակում ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ փորձագետները գնահատեցին իրավիճակը (ինստիտուցիոնալ կառուցվածքը, իրավական հիմքերը, դատախազության կարողությունները, ուսուցման հնարավորությունները): Արդյունքում 2005թ. նոյեմբերին ԺՀՄԻԳ և ԵԱՀԿ գրասենյակը դատախազության ուսումնական կենտրոնում

կազմակերպեցին ընտանեկան բռնության քննության թեմայով ուսուցում: Ուսուցմանը մասնակցում էին Երևան քաղաքի և մարզերի մոտ 40 ներկայացուցիչներ (դատախազներ, քննիչներ): Ի շարունակումն՝ 2006թ. նախատեսվում է կազմակերպել մի շարք դասընթացներ:

Փաստաբաններ. Գրասենյակը մեծ ուշադրությամբ հետևել է 2005թ. հունվարին ուժի մեջ մտած Փաստաբանության մասին օրենքի մշակման աշխատանքներին, այդ կապակցությամբ մի շարք հանդիպումներ է ունեցել փաստաբանների և միջազգային ու տեղական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ: Գրասենյակի և ԺՀՄԻԳ աջակցությամբ վեց փաստաբաններ մասնակցել են Թիֆլիսում տեղի ունեցած Մարդու իրավունքների լրացուցիչ հանդիպմանը, որը նվիրված էր արդար դատավարության չափանիշների ստանդարտների ապահովման գործում փաստաբանների դերին: 2006թ. ԺՀՄԻԳ-ի հետ համատեղ գրասենյակը կկազմակերպի դասընթացներ հասարակական պաշտպանների համար:

Ազգային մոնիտորինգի մեխանիզմ քրեակատարողական հիմնարկների համար. 2004թ. քրեակատարողական հիմնարկների քաղաքացիական մոնիտորինգի խմբի համար կազմակերպված մի շարք դասընթացներից հետո, Գրասենյակը շարունակում է ուշադիր կերպով հետևել խմբի գործունեությանը, ժամանակ առ ժամանակ այցելում է նրանց հերթական հանդիպումներին: Գրասենյակի աջակցությամբ խումբը հայերեն և անգլերեն լեզուներով հրատարակեց իր տարեկան հաշվետվությունը: Գրասենյակը կշարունակի խմբին ցուցաբերվող աջակցությունը՝ ուշադրություն դարձնելով հաշվետվություն պատրաստելու և այցելություններ կազմակերպելու հմտությունների վրա:

Քրեակատարողական համակարգի աշխատակազմի և ինստիտուցիոնալ կարողությունների զարգացում. Գրասենյակն աջակցում է ՀՀ արդարադատության նախարարությանը կարողությունների զարգացման գործում: 2005թ. սեպտեմբերին Երևանում վերաբացվեց ՀՀ արդարադատության նախարարության իրավաբանական ինստիտուտի բանտային աշխատակազմի վերապատրաստման կենտրոնը, որի վերանորոգման աշխատանքները կատարվել էին ԵԱՀԿ երևանյան գրասենյակի աջակցությամբ: Երկու դահլիճ և մեկ համակարգչային սենյակ ունեցող նոր վերանորոգված ուսումնական հաստատությունը կկարողանա տարեկան վերապատրաստել ՀՀ քրեակատարողական համակարգի մոտ 300 աշխատակցի: Բացի այդ, հատուկ մասնագիտացված կարճաժամկետ դասընթացներ կկազմակերպվեն 40-50 նոր ընդունված աշխատակիցների համար, ինչպես նաև 27 մասնագետների համար, որոնք աշխատում են վերականգնողական և վերինտեգրման ոլորտներում:

Այլընտրանքային պատժամիջոցներ. Գրասենյակի պատվերով հասարակական կազմակերպության կողմից կատարվել է օրենսդրական դաշտի և հանրային կարծիքի մանրակրկիտ վերլուծություն: Այս նախաձեռնության օգնությամբ նախանշվել են առաջնահերթ գործողությունների իրականացում պահանջող ոլորտները, ինչպես նաև մշակվել են առաջարկություններ: Այսպիսով՝ քրեական դատավարության ոլորտի հիմնական դերակատարները պատկերացում կազմեցին, թե ինչ ուղղությամբ պետք է աշխատեն՝ Հայաստանում արդյունավետ այլընտրանքային պատժամիջոցներ ձևավորելու համար: Հաշվետվությունը հրատարակվել և բաժանվել է գրասենյակի և Բաց հասարակության ինստիտուտի ու Բրիտանական դեսպանատան հետ համատեղ 2005թ. մարտի 16-ին կազմակերպված շնորհանդեսի ժամանակ:

Այլընտրանքային զինծառայության ներմուծում. Գրասենյակն աջակցել է նոր օրենքի մշակման աշխատանքներին և հետևել դրա կատարմանը: 2004թ. գարնանը գրասենյակի կողմից ՀՀ պաշտպանության նախարարությանն է տրամադրվել

փորձագիտական փաստաթուղթ, որտեղ այլ երկրների փորձի հիման վրա ներկայացված էին զինծառայության այլընտրանքային տարբերակները և այլընտրանքային եղանակով զինվորական ծառայություն իրականացնողների պատասխանատվությունը: 2005թ. սկզբներին գրասենյակն այցելել է այլընտրանքային ծառայության իրականացման երկու տարածք և կառույցների ղեկավարների ու բարձրաստիճան պաշտոնյաների հետ քննարկել վիճակը բարելավելու հնարավորությունները, ինչպես օրինակ՝ ծառայությունը սկսելուց առաջ այլընտրանքային ծառայություն իրականացնողների համար նախապատրաստական դասընթացների կազմակերպումը: Գրասենյակը հավասարապես հետևել է նաև այլընտրանքային զինծառայության հետ կապված դատական վարույթներին:

Մարդու իրավունքների պաշտպանության հետ կապված իրավիճակը բանակում. 2004-2005թթ., ՀՀ պաշտպանության նախարարի համաձայնությամբ, գրասենյակը հետևել է բանակում մարդու իրավունքների պաշտպանության հետ կապված իրավիճակին: Ծրագիրը բաղկացած էր զորամասեր կատարված այցելություններից, որոնց ժամանակ հանդիպումներ էին տեղի ունենում սպաների և զինվորների հետ: Հավասարապես ուշադրություն է դարձվել ծառայողական աճնակազմի բնակարանային պայմաններին: Ծրագրով հետագայում նախատեսված էր ֆոկուս խմբերի հանդիպումներ՝ միջազգային կազմակերպությունների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների և նախկին զինծառայողների մասնակցությամբ:

Խղճի, կրոնի և դավանանքի ազատություն. Գրասենյակը ուշադիր հետևում է Հայաստանում Եհովայի վկաների հետ կապված իրավիճակին և «Կրոնի ազատության մասին» օրենքի մշակման աշխատանքներին:

2005թ. հոկտեմբերին ՀՀ արտաքին գործերի նախարարության հետ համատեղ գրասենյակը Հայաստանի օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնում կազմակերպեց «Մշակույթի միջոցով դեպի հանդուրժողականություն» թեմատիկ համերգը: Միջոցառումը ընդգծեց հանդուրժողականության կրթության և բաց հասարակության կարևորությունը, որոնք հանդիսանում են ժողովրդավարության զարգացման հիմնաքարը:

Հասարակության իրազեկում մարդու իրավունքների հարցերի վերաբերյալ. 2005թ. հուլիսին Հայաստանի հանրային հեռուստատեսությամբ եթեր արձակվեց 3 թոք շոու: Թոք շոուների ժամանակ քննարկում ծավալվեց կառավարության, հասարակական կազմակերպությունների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների միջև:

Հ2 հեռուստաալիքով եթեր թողարկված թոք շոուների ժամանակ քննարկվել են այնպիսի թեմաներ, ինչպիսիք են հանդուրժողականությունը և կրոնի ազատությունը, դատական համակարգը և այլընտրանքային ծառայությունը:

Մարդու իրավունքների խախտումների վերաբերյալ անհատական բողոքներ. Ինչպես նախորդ տարիներին, այս տարվա ընթացքում նույնպես, գրասենյակը շարունակել է ընդունել մարդու իրավունքների ենթադրյալ խախտումների վերաբերյալ անհատական բողոքներ: Սա հնարավորություն է տալիս ավելի լավ վերահսկել հանրապետությունում մարդու իրավունքների պաշտպանության հետ կապված իրավիճակը և տեղեկություններ է տալիս մարդու իրավունքների պաշտպանությունը խթանելու և համապատասխան ծրագրեր/աշխատանքներ նախաձեռնելու համար: Բողոքները, որոնցով զբաղվում է գրասենյակը մեծամասամբ առնչվում են քաղաքացիական և քաղաքական իրավունքների ենթադրյալ խախտումների հետ:

Գրասենյակը սերտորեն համագործակցում է Հայաստանի համապատասխան պետական մարմինների հետ՝ բողոքներին լուծում տալու համար:

Ժողովրդավարացման ոլորտ

Պայքար թրաֆիկինգի դեմ. 2005թ. գրասենյակը շարունակել է աջակցել ՀՀ կառավարությանը մարդկանց առևտրի (թրաֆիկինգի) զոհերի իրավունքները պաշտպանելու արդյունավետ մեխանիզմներ մշակելու և կիրառելու գործում: Գրասենյակի կողմից պատրաստվել է թրաֆիկինգի դեմ պայքարի օրենսդրության վերլուծություն և վերանայվել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում տուժողների և վկաների պաշտպանության վերաբերյալ փոփոխություններ կատարելու նախագիծը: Գրասենյակն աջակցել է ՀՀ կառավարությանը ուղղորդման ազգային մեխանիզմ ձևավորելու, թրաֆիկինգի զոհերին պաշտպանելու և օժանդակելու համար պետական և ոչ պետական դերակատարների համակողմանի համագործակցության մեխանիզմ մշակելու հարցում: Հաջորդ տարի գրասենյակը շարունակելու է աջակցել ուղղորդման ազգային մեխանիզմի կայացմանը և տեխնիկական աջակցություն է տրամադրելու ՀՀ իշխանություններին և հասարակական կազմակերպություններին:

Միգրացիա. 2005թ. գրասենյակն աջակցել է ՀՀ կառավարությանը «Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին» օրենքի նախագծի վերաբերյալ միջազգային փորձագիտությամբ (օրենքն ընդունվել է 2005թ. աշնանը):

2005թ. գարնանը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ համատեղ գրասենյակը կազմակերպեց սեմինար-քննարկում աշխատանքային միգրացիայի հարցերի վերաբերյալ: Միջոցառման ընթացքում քննարկվեցին ՀՀ օրենսդրությունը և միջազգային միգրացիային առնչվող վարչական դաշտը վերանայելու նպատակով գրասենյակի կողմից իրականացված ծրագրի նախնական արդյունքները, ինչպես նաև հանրապետության տնային տնտեսությունների շրջանում անցկացված աշխատանքային միգրացիային առնչվող սոցիոլոգիական հարցման արդյունքները: 2006թ. փետրվարին գրասենյակը նախատեսում է կազմակերպել մամլո ասուլիս հետազոտության արդյունքների վերաբերյալ:

CIMERA հասարակական կազմակերպության համագործակցությամբ գրասենյակը միգրացիայի և գործազրկության բարձր ցուցանիշներ ունեցող հանրապետության երեք մարզերում կազմակերպել է միգրացիայի վերաբերյալ կլոր սեղաններ-քննարկումներ: Կլոր սեղաններն ուղղված էին հանրությանը իրազեկելու միգրացիային առնչվող այնպիսի խնդիրների վերաբերյալ, ինչպիսիք են դրսում օրինական աշխատանք ձեռք բերելու հնարավորությունները, Հայաստանի հայրենադարձության և ինտեգրման քաղաքականությունները: Երևան քաղաքում դեկտեմբերին կազմակերպված եզրափակիչ կլոր սեղանը ՀՀ իշխանությունների և այդ ոլորտի այլ շահագրգիռ կողմերի համար ամփոփեց ներկայացվելիք առաջարկությունները:

Մամուլի ազատություն. 2005թ. գրասենյակը շարունակեց ղեկավարել զանգվածային լրատվության օրենսդրության հարցերով աշխատանքային խումբը, որը ֆորում է հանդիսանում այս ոլորտում առկա խնդիրները փոխանակելու համար: 2003թ. ստեղծված աշխատանքային խումբը մի շարք գրություններով դիմել է ՀՀ իշխանություններին ՝ մտահոգություն արտահայտելով զանգվածային լրատվությանն ու տեղեկատվության ազատությանը առնչվող ՀՀ օրենսդրության թերությունների և լրագրողների նկատմամբ գործադրված բռնությունների վերաբերյալ: 2005թ. գրասենյակի աջակցությամբ ուսումնասիրվեցին հեռարձակման լիցենզավորման

կանոնակարգը: Այս ծրագրին կհաջորդի հեռարձակման լիցենզավորման կանոնակարգի և հեռարձակումը կարգավորող մարմինների ինստիտուցիոնալ որոշում կայացնելու գործընթացի ավելի համակողմանի ուսումնասիրություն: 2006թ. գրասենյակը կնպաստի հանրային հեռուստատեսության կարողությունների զարգացմանը: Սա կիրականացվի 2006թ. խմբագիրների և լրագրողների համար կազմակերպվելիք դասընթացների ձևով, որը հաջորդելու է ժողովրդավարացման ոլորտում հանրային հեռարձակման դերի վերաբերյալ քննարկումներին:

Գենդերային հարցեր. 2005թ. առաջին կեսին Քաղաքացիական հասարակության զարգացման կենտրոնի հետ համատեղ գրասենյակը իրականացրեց ծրագիր՝ գենդերային հարցերի վերաբերյալ աշակերտների իրազեկման մակարդակը բարձրացնելու համար, որը իրականացվել է Հայաստանի տարբեր մարզերի միջնակարգ դպրոցներում շարադրություն գրելու մրցույթ հայտարարելու միջոցով: 2005թ. երկրորդ կեսին գրասենյակը և ՄԱԿ-ի Հարավային Կովկասում գենդերային և քաղաքականության ծրագիրը համատեղ կազմակերպեցին ուսուցում՝ տեղական ընտրություններին մասնակցել ցանկացող կանանց հմտություններ հաղորդելու նպատակով: Կազմակերպվել են մի շարք դասընթացներ՝ բոլոր մարզերում բարձրացնելու կանանց մասնակցությունը տեղական ընտրություններին՝ որպես քվեարկողներ և թեկնածուներ:

<u>Հմուտ կառավարում</u>

Աջակցություն ընտրական բարեփոխումներում. Գրասենյակը շարունակել է իր աշխատանքը այս ոլորտում՝ հիմնականում ուշադրություն դարձնելով ՀՀ ընտրական օրենսգրքի փոփոխություններին, որոնք ընդունվել են 2005թ. մայիսին: Այդ փոփոխությունների մշակման ընթացքում ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ի և ԵԽ Վենետիկ հանձնաժողովի կողմից մի շարք գրավոր կարծիքներ և առաջարկություններ են տրամադրվել Ազգային Ժողովին: Գրասենյակն աջակցել է ՀՀ իշխանություններին՝ տրամադրելով սեփական փորձառությունը և քաղաքացիական հասարակության կողմից ներկայացված առաջարկությունները: Այս հարցի շուրջ գրասենյակը կազմակերպել է նաև փորձագիտական քննարկում պատգամավորական խմբերի և խմբակցությունների, ինչպես նաև տեղական փորձագետների հետ: Հիմնական փոփոխությունները կապված էին ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչությունում ընտրողների ռեգիստրի ստեղծման և ընտրական հանձնաժողովների ձևավորման նոր բանաձևի հետ: Չնայած օրենսգրքի որոշ բարելավումներին՝ միջազգային փորձագետները գտնում են, որ միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու համար որոշ դրույթներ դեռևս փոփոխության կարիք ունեն:

Ընտրական օրենսդրության բարեփոխումները խթանելուն զուգահեռ՝ գրասենյակը նաև ուշադրություն է դարձնում ընտրական վարչարարության բարելավմանը և, մասնավորապես, ընտրողների ռեգիստրին: Գրասենյակը աջակցել է քաղաքացիական հասարակության և ըստ նոր Ընտրական օրենսգրքի ընտրողների ռեգիստրը վարելու համար իրավասու մարմինների միջև խորհրդակցությունների անցկացմանը և հուսով է, որ 2006թ. ընթացքում կունենանք ավելի անթերի և ամբողջական ռեգիստր:

Գրասենյակը շարունակել է նախագահել ընտրությունների հարցերով միջազգային աշխատանքային խումբը, որը կազմված է ընտրությունների ոլորտի Երևանում գտնվող հիմնական միջազգային շահագրգիռ կողմերից: Խումբը տեղեկատվության փոխանակման և աշխատանքների համակարգման, ինչպես նաև

ընտրություններին աջակցելու համար միջազգային դերակատարների համագործակցության ֆորում է հանդիսանում:

Աջակցություն սահմանադրական բարեփոխումներին. Գրասենյակը ուշադրությամբ հետևել է սահմանադրական բարեփոխումների հետ կապված զարգացումներին: Գրասենյակի միջոցով ՀՀ իշխանություններին տրամադրվել են փոփոխությունների փաթեթի մարդու իրավունքներին առնչվող բաժնի վերաբերյալ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ փորձագետների դիտողությունները: Բացի այդ, նախքան նոյեմբերի 27-ի հանրաքվեն գրասենյակը կազմակերպել է լրատվամիջոցների քարոզարշավ՝ ընտրողների մասնակցությունը քվեարկության գործընթացում խթանելու համար:

Հանրաքվեի ժամանակ ենթադրյալ խախտումների վերաբերյալ հաղորդումներ ստանալուց հետո՝ գրասենյակը դիմել է ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովին և ՀՀ գլխավոր դատախազությանը, որպեսզի անցկացվի հաղորդված դեպքերի մանրակրկիտ ուսումնասիրություն ու հետաքննություն:

ՀՀ ազգային ժողովի մշտական հանձնաժողովների կարողությունների զարգացում. Հիմնվելով նախորդ տարվա հաջող փորձի վրա՝ 2005թ. գրասենյակը շարունակեց ՀՀ Ազգային Ժողովի մշտական հանձնաժողովների մասնագիտական աշխատակազմի կարողությունների զարգացմանն ուղղված աջակցության ծրագիրը: Աշխատանքն իրականացվել է ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովի հետ համատեղ: Առաջին փուլը կազմված էր հունիս ամսին Երևանում երեք մշտական հանձնաժողովների և երկու վարչությունների մասնագիտական աշխատակազմի համար կազմակերպված 3-շաբաթյա համակողմանի դասընթացներից: Երկրորդ փուլը առաջինի գործնական շարունակությունն էր, որի ժամանակ որոշ մասնակիցներին հնարավորություն շնորհվեց այցելելու Սլովենիայի խորհրդարան՝ կարճատև այցելություն կատարելով նաև Վիեննա՝ հանդիպելու Ավստրիայի խորհրդարանի և ԵԱՀԿ խորհրդարանական վեհաժողովի ներկայացուցիչներին: Գրասենյակի կողմից ՀՀ ազգային ժողովին նվիրատվության կարգով նաև տրամադրվել է մասնագիտական գրականություն: Գրասենյակի կողմից նմանատիպ 1-շաբաթյա ուսուցում է կազմակերպվել ՀՀ արտաքին գործերի նախարարության աշխատակիցների համար:

Հանրահավաքների ազատության խթանում. ԵԱՀԿ և Եվրոպայի Խորհրդի փորձագետները իրենց համատեղ տեսակետներում մի քանի անգամ նշել են, որ 2004թ. «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» օրենքը խիստ սահմանափակող է և չի համապատասխանում բոլոր միջազգային չափանիշներին: Հետևաբար, գրասենյակն աշխատել է ՀՀ Ազգային Ժողովի հետ՝ օրենսդրությունը բարելավող մի շարք փոփոխություններ կատարելու նպատակով: Ազգային Ժողովի խնդրանքով միջազգային փորձագետները տրամադրել են առաջարկությունների մի շարք փաթեթներ: Բացի այդ, ԵԱՀԿ գրասենյակը, Եվրոպայի Խորհուրդը և ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ը կազմակերպել են փորձագետների հետ մի շարք քննարկումներ և միջազգային կլոր սեղան «Ժողովներ անցկացնելու ազատություն. օրենսդրություն և կիրառում» թեմայով: Այս միջոցառումները հանրահավաքներ կազմակերպելու ազատության վերաբերյալ Հայաստանում ավելի լայն քննարկումներ ծավալելու ֆորում ստեղծեց և նպաստեց 2005թ. հոկտեմբերին փոփոխված օրենքի ընդունմանը: ԵԱՀԿ և ԵԽ Վենետիկի հանձնաժողովի փորձագետները նշել էին, որ իրենց առաջարկությունները հիմնականում հաշվի էին առնվել, սակայն նրանք շեշտել էին, որ հանրահավաքների ազատությունը մեծապես կախված է դրանց իրականացումից ու մեկնաբանումից: 2006թ. ընթացքում գրասենյակը կշարունակի զբաղվել այս հարցով և հուսով է, որ փոփոխությունների արդյունքում քաղաքացիներն ավելի մեծ ազատություն կունենան հանրահավաքներ անցկացնելու և իրենց մտքերն առանց անտեղի սահմանափակումների արտահայտելու համար:

Պայքար կոռուպցիայի դեմ. Բացի Կոռուպցիայի դեմ պայքարի հարցերով միջազգային աշխատանքային խումբը նախագահելուց, գրասենյակը մեծ ուշադրություն է դարձրել կոռուպցիայի դեմ պայքարում քաղաքացիական հասարակության հզորացումը: Մասնավորապես, գրասենյակն աջակցել է 10 հասարակական կազմակերպությունից բաղկացած հասարակական կազմակերպությունների կոալիցիային, մի շարք նախաձեռնություններում՝ պետավտոտեսչության, առողջապահության, կառավարության թափանցիկության, կրթության ոլորտներում կոռուպցիայի դեմ պայքարելու վերաբերյալ հասարակությանը իրազեկելու համար: Բացի այդ, ազգային հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման գործում կառավարությանը և քաղաքացիական հասարակությանը օգնելու նպատակով, ՀՀ գլխավոր դատախազության հետ համատեղ գրասենյակը թարգմանել և հայերենով հրատարակել է ԵԱՀԿ տնտեսական և բնապահպանական հարցերի համակարգողի գրասենյակի կողմից թողարկված «Ինչպես պայքարել կոռուպցիայի դեմ» գիրքը: ՀՀ քաղաքացիական ծառայության հետ համատեղ գրասենյակը հրատարակել է նաև այդ ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարելու վերաբերյալ «100 փաստարկ» ձեռնարկը:

Նոյեմբերի 29-30-ը ԵԱՀԿ տնտեսական և բնապահպանական հարցերի համակարգողի գրասենյակի և ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիտորինգի հանձնաժողովի հետ համատեղ գրասենյակը Երևանում կազմակերպեց միջազգային համաժողով «Հակակոռուպցիոն ազգային և միջազգային իրավական գործիքներ և լավագույն փորձ» թեմայով: